

նոր առաջին անապատին տեղը, բայց նոյն թուակա-
նէն և հետեւաբար է. դարէն առաջ Այն Քեարիմի Ս.
Կարապետ եկեղեցին կը պահէր փոքրիկն Յովհաննէսի
քաֆսոցի ֆարը: Շատ ուխտաւոր ուղեգիրներ տեսած
են այս քարը՝ ինչպէս Դանիէլ և Փոկաս անապատի
յիշատակներ առին այս լերան մասին, որուն՝ Եզր-
սարէթ յանձնած էր իր զաւակը:

ԺԲ. դարուն սակայն, եկեղեցի մը եւ վանք մը
նուիրագործեցին Ս. Յովհաննու անապատին մէջ՝ Ս.
Կարապետի առաջին միայնակեցութեան յիշատակը:
Բազմաթիւ ուխտաւորներ խօսած են անոնց աւերակ-
ներուն վրայ, եւ այսօր ալ կը տեսնուին անոնց նը-
շանները(*):

Ս. Եղիսաբէրի գերեզմանը. — Թ. դարու եկեղե-
ցական պատմիչ մը՝ Կէորզ Կեզրեհնոս կը պատմէ
թէ Ս. Եղիսարէթ ազատելու համար իր զաւակը Հե-
րովդէսի կատաղութենէն անապատ քաշուելով, հոն
մեռաւ քառասուն օր վերջ, և այնուհետեւ հրեշտակ
մըն էր որ կը հոգար մանուկը բայց տեղեկութիւն մը
չի տար թէ հոն թաղուեցաւ (Migne, P. G. CXX 533):
Ուրիշ ուղեգիրներ ևս կը յիշեն թէ Ս. Եղիսարէթ ա-
նապատին մէջ վախճանած է, բայց անոր գերեզմանը
անձանօթ կը մնայ (Bar. gd. էջ 304-306):

3. Խաչավանքի աւանդութիւնը. — Խաչավանքը
Հայր Աբրահամու դռնէն գէպի արեւմուտք 2.5 մղոն

(*) Ուղեգիր ուխտաւորներ մասնաւորապէս կը յիշեն թէ Ս. Յով-
հաննու անապատին մէջ Murillo ի (նշանաւոր սպանիացի նկարիչ)
Յովհաննու Մկրչի պատկերը կը գտնուի, եւ սուրբին նկարանին մէջ
կան քանդակներ՝ անոր կեանքին այլ եւ այլ դրուագներէն առնուած
(H. P. S. էջ 162):